

ՄԵԼԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուլբուլ է, կես տարեկանը 5 բուլբուլ, Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, редакция «Мшакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և առն օրերէն):

Շաբաթադրութիւնը ընդունվում է ամեն լիզուով:

Շաբաթադրութիւնները համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՔՈՂԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Կայսրի հետգրը կաթողիկոսին. Կաթողիկոսի հետգրը Կայսրին. Կաթողիկոսի հետգրը Փոխարքային. Փոխարքայի պատասխանը. Հասարակութեան հետգրը. — Ներքին Տնտեսութիւն. Օգոստոսի 7-ի գահաձագանակ մարտնչը: Արդարութեան գործ. 1874 թ. յուլիսի 19-ի կանոնները. Բարձրագոյն Ուկրաինայի մէջ. Ներքին խորհուրդ. Հիմնական. — ՅԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ. ԲԱՆԱՆԻՔ.

ՔԱՅԱՆՈՐ ԿԱՅՍՐԻ ՊԱՏԱՍԽԱՆ. ՀԵՌԱԳԻՐԸ ՎԵՂ. ԿԱՅԱՆՈՐԻՆ

Թիֆլիս, Ամենայն Հայոց Կաթողիկոսին:
Անկեղծօրէն շնորհակալութիւն եմ յայտնում Ձեր Մարտնչեան արտայայտած զգացումներին համար: Թող Տէրը իմաստացի և հաղթական հօտը արդարացնելու իմ նրան ցոյց տուած վստահութիւնը:
ՆԻԿՈՒՅՑ

ՓՈԽԱՐԿԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆ. ՀԵՌԱԳԻՐԸ

Թիֆլիս.
Նորին Մարտնչեան Ամենայն Հայոց Կաթողիկոսին:
Արտայայտելով Ձեր Մարտնչեան իմ խորին երախտագիտութիւնը Ձեր բարի ցանկութիւններին առիթով ինձ և իմ ընտանեացս, վստահանում եմ յայտնել, որ Կովկասի հայերը կը կարողանան իրանց հաւատարմիմ հպատակութեամբ ապացուցանել Թագաւոր Կայսրին, թէ որքան շնորհապաշտ են Նորին Մեծութեան իրանց ցոյց տուած Մարտնչեան շնորհաց համար: Յանձնում եմ ինձ ձեր սուրբ աղօթքին:

Կօմս Վօրոնցով-Դաշկով

ԲԱՆԱՆԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ

Փողովներ եւ խորհրդածութիւններ կազմելու տեղական ազգաբնակչութեան ցանկացողները Անդրկովկասում գնահատվում են հասարակութեան ցանկացողները:

(Շարունակութիւն)

12) Դատաւական (կամ օկրուգի) խորհրդակցութեան զբաղմունքները վերջանալուց յետոյ բոլոր արձանագրութիւնները և միւս գործադրական թղթերը խորհրդակցութեան նախագահը յանձնում է գաւառագետին (օկրուգի գլխաւորին), որն անյապաղ ներկայացնում է այդ ամենը նահանգապետին:

13) Առաջին խմբի (նահանգներէ 3-ը յօդուած) նախագահ և ընտրողական ժողովները, նոյնպէս և գաւառական (օկրուգի) խորհրդակցութիւնները Թիֆլիսի և Բուխարայի նահանգներում ազնուականութիւնները պարագլուխները կամ նրանց փոխարինող անձերը այդ անձերն էլ նախագահում են այդ ժողովներին և խորհրդակցութիւններին. մնացած վայրերում, նոյնպէս և Թիֆլիսի ու Բուխարայի նահանգներում ազնուականութեան պարագլուխ կամ նրա փոխարինող բացակայութեան դէպքում, ժողովները և խորհրդակցութիւնները բաժնում են գաւառագետը (կամ օկրուգի գլխաւորը), որը ժողովը կամ խորհրդակցութիւնը բաց անելով, առաջարկում է նրանց նախագահ ընտրել իրանց մէջից: Մի և նոյն կարգը գործադրվում է նաև Թիֆլիսի ու Բուխարայի նահանգներէ մասի հողատէրերի ժողովներում և այն բաղադրութեամբ ու գաւառներում, ուր բաղադրութիւն ինքնավարութիւն չը կայ:

14) Նահանգական (ըրջանային) խորհրդակցութիւնը կազմվում է գաւառական խորհրդակցութիւնների յատկապէս ընտրված անձերից և, անհրաժեշտ իրաւունքներով—կա-

վել. ԿԱՅԱՆՈՐԻՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ԿԱՅ. ՍԵՐԱԿԱՆ ՄԵՇՈՒԹԵԱՆ

Պետերբուրգ, Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրին:

Քո թագաւորութեան հասած մեծ փորձանքի ծանր տարւում, որ վշտով լրացրեց Քո սիրտը, Դու յիշեցիր Քո արքայական զթութեան մէջ Քեզ հաւատարմիմ հայկական ազգը և վերադարձրիր Քո վստահութեան հետ միասին լայն լուսաւորական գործունէութեան բոլոր միջոցները: Մեծ է երախտագիտական ցնծութիւնը իմ ամբողջ հօտի, թէ պետութեան սահմաններում և թէ աշխարհի միւս մասերում: Լցվում է խորին զգացվածութեամբ և Քո ջերմեանդ աղօթաբարի սիրտը, որ ապրեց, մինչև կատարվեց իմ անշուք հաւատը առ Քո արդարաւորութիւնը և Քո մարդասէր իմաստութիւնը: Մյուս, առաջին կիրակի օրը Քո կամքի յայտարարութիւնից յետոյ, Թիֆլիսի Մայր եկեղեցւում, տեղական ամբողջ հոգևորականութեան պաշտօնաւորութեամբ, ես աղօթեցի իմ ամբողջ հօտի հետ Քո, Սրբայ, և Քո Օգոստոսի Ընտանիքի առողջութեան և երկարակեցութեան համար:

Ձերմ էր մեր աղօթքը: Թող Ամենակալը ուղարկէ Քո սրտին մխիթարութիւն և ուրախութիւն՝ արտաքին խաղաղութեան և ներքին անդորրութեան շուտափոյթ հաստատութեան համար, յերջանկութիւն Քո համայն ժողովրդի:

Սկրիպ I, Կաթողիկոս ամենայն Հայոց

գիւնդի պալատի կառավարչից կամ նրա փոխարինող մի անձից, նրանից նշանակված, երբ կարգը թիւն և արքայական տան կառավարչի (ուղեւորի) վարչութիւնների ներկայացուցիչներից, նահանգական կամ պալատականների վարչութեան մի անդամից կամ հաշտարար միջնորդից, նահանգապետից նշանակված, և նահանգականութեան ըրջանային բաղադրութեան:

15) Նահանգական և ըրջանային խորհրդակցութիւնները բաց է անում նահանգապետը կամ նրան փոխարինող անձը:

Թիֆլիսի և Բուխարայի նահանգներում նահանգական խորհրդակցութեանը նախագահում է ազնուականութեան նահանգական պարագլուխը կամ նրա փոխարինողը. այն դէպքում, երբ նահանգական ազնուականութեան պարագլուխը կամ նրա փոխարինողը բացակայում են, նահանգապետն առաջարկում է հաւաքվածներին ընտրել իրանց միջից նախագահ:

Միւս նահանգներում և ըրջաններում (Չերեքովսկի, Գանձակի, Երևանի, Բագրատի, Դաղստանի, Կարսի, Բաթումի) նահանգապետը, բանալով նահանգական կամ ըրջանային խորհրդակցութիւնը, առաջարկում է ժողովականներին իրանց միջից մէկին նախագահ ընտրել: Մանրութիւն: Նախագահ ընտրվելու պէս՝ նահանգապետը նրան է յանձնում գաւառական (կամ օկրուգի) խորհրդակցութիւնների բոլոր նիւթերը՝ նահանգական կամ ըրջանային խորհրդակցութեան մէջ ընկնելու, որը յայտնում է իր կարծիքն այդ հարցերի մասին:

16) Նահանգական խորհրդակցութեան զբաղմունքի առարկաներն են. 1) Ներկայացուցիչների լիազօրութիւններն ստուգել. 2) Դատաւական խորհրդակցութիւնների յայտնած դատողութիւնները մասին եղբակցութիւններ կայացնել՝ Անդրկովկասեան երկրում գնումաւալին անտեսութեան ձևափոխութեան առիթով, նոյնպէս և իր սեփական ենթադրութիւնները այն հարցերի մասին, որոնք վե-

վել. ԿԱՅԱՆՈՐԻՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ԿԱՅ. ՓՈԽԱՐԿԱՅԻ ԿՈՍՍ ՎՈՐՈՆԸՈՎ. ԴԱՇԿ. ԿՈՎԻՆ

«Կիսովօղակ, Նորին Մեծութեան Փոխարքայ կօմս Վօրոնցով-Դաշկովին:

Վերադարձելով իմ հօտիս հետ միասին ջելմ աղօթքներ Մեծ Թագաւոր Կայսրի բարեկեցութեան համար, հայ եկեղեցւում և հայկական ազգին ցոյց տուած շնորհի մասին, ես յայտնում եմ Ձերդ Պայծառափայլութեան խորին երախտագիտութիւն Ձեր սրտը միջնորդութեան համար և օրհնում եմ Ձեզ և Ձեր ընտանիքը, ցանկալով Ձեզ ոյժ՝ իրաւորեցիւ Ձեր ինքնաքին յանձնած երկրի համար մշակած բարի ծրագրերը:

Սկրիպ I, Կաթողիկոս ամենայն Հայոց

ՀԱՅ ՀԱՍՏԱՆԻՔԻՆ ԶԵՌԱԳԻՐԸ

Կիսովօղակ, Նորին Պայծառափայլութեան Իւրիշի Իվանովիչ Վօրոնցով-Դաշկովին Նորին Մեծութեան Փոխարքային Կովկասում:

Մյուս Վանքի Մայր եկեղեցւում Թիֆլիսի հայոց եկեղեցիների ամբողջ հոգևորականութեան պաշտօնակցութեամբ սուրբ պատարագից յետոյ Նորին Վեհափառութիւն ամենայն Հայոց Կաթողիկոսը հաղարարեց ամբողջ հօտի հետ ջերմ աղօթքներ առաքեց Ամենաբարձրաւոր Թագաւոր Կայսրի և Օգոստոսի Ընտանիքի առողջութեան և արեւատութեան համար, որ ամենադրամածարար հրաւարել է հայոց եկեղեցւում և ազգին լուսաւորել ընդհանր ինքնագործունէութեան միջոցներ տալ և հայոց եկեղեցւում յետ

բաժված են 11-ը յօդուածի 2-ը կետում 3) Ընտրութեան իրանց միջից միւսերկայացուցիչ, ՆՈՐԻՆ ԿԱՅԱՆՈՐԻՆ ՄԵՇՈՒԹԵԱՆ Կովկասի Փոխարքայի խորհրդին մասնակցելու համար՝ Անդրկովկասի զեմաւալին հաստատութիւնների օրէնսդրութեան նախագիծը ընկնելու ժամանակ:

17) Նահանգական և ըրջանային խորհրդակցութիւնների զբաղմունքները վերջանալուց յետոյ, գաւառական (օկրուգների) խորհրդակցութիւնների բոլոր նիւթերը և նահանգական խորհրդակցութիւնների արձանագրութիւնները յանձնվում են նահանգապետին (ըրջանի գլխաւորին) անյապաղ ներկայացնելու ՆՈՐԻՆ ԿԱՅ. ՍԵՐԱԿԱՆ ՄԵՇՈՒԹԵԱՆ Կովկասի Փոխարքայի Դիւանին:

18) Ժողովներում և խորհրդակցութիւններում պահպանվում է հետեւեալ կարգը:

1) Ներկայացուցիչների, նախագահների և բարոտաւարների ընտրութիւնները կատարվում են այն ձևով, ինչ ձևով էլ ժողովը կը համարէ ամենից յարմար:

2) Մինչև ներկայացուցիչներ կամ նախագահ ընտրել, ժողովը իր միջից ընտրում է լիազօրաւորներ, որոնք կը կազմեն ժողովի մասնաժաման արձանագրութիւնը, որը մէջ կը մտնեն խորհրդակցութեան մէջ հաւանութեան արձանագրութեան մէջ ինքնապատշաճութեան կարծիքները:

3) Ժողովները արձանագրութիւններին պարտաւորապէս պէտք է ստորագրեն նախագահները և բարոտաւարները, իսկ ժողովի անդամներից միայն ցանկացողները:

4) Ժողովները և խորհրդակցութիւնները բոլոր անդամները հաւատարմութեանը ունեն և կարծիքներ են յայտնում բոլորովին ազատօրէն, ձեռք չընկնելով:

5) Ժողովները և խորհրդակցութիւններին նիստերը կատարվում են հրապարակօրէն, բայց կողմնակի ներկայ եղող անձերին թոյլ

դարձնել եկեղեցապատկան գոյքերը ազատօրէն անօրինելու դարեւրով սրբագործված իրաւունքը: Հայ հասարակութիւնը, որ խորին երախտիքի զգացմունքով է համակված դէպի Ձեր Պայծառափայլութիւնը՝ Բարձրագոյն կամքի այդ արդարամիտ ակտին միջնորդ լինելու համար, յերմապէս աղօթում է Ամենակալը Աստուծուն, որ երկար կեանք տայ Ձեզ և Նորին Պայծառափայլութեան կօմսերի Երախտագիտութեան, որ այնչափ սրտանց ուրախակից հանդիսացաւ հայ ժողովրդի այս մեծ ուրախութեանը,—հայ ազգը, որ խորապէս զորոյն Ձեր թանգազին անունները իր երախտագիտ սրտում:

Թիֆլիսի հայ հասարակութեան կողմից տեղական եկեղեցիների երէց-փոքրեր՝ Արշակ Բաբեան, Աւետիս Արապեան, Ստեփան Մնացականեան, Բարսեղ Աւանեան, Առաքել Աւագեան, Մկրտիչ Գոսպարեան, Ալեքսանդր Գալանթարեան, Առաքել Վարդապետեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕԳՈՍՏՈՍԻ 7 Ի ԳՈՂԱՐԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԸ

Կիրակի, օգոստոսի 7-ին, Վանքի Մայր եկեղեցւում հշանակված հանդիսաւոր գահաձագանակ մաղթանքը՝ հայ եկեղեցւում և ազգին ցոյց տուած Կայսերական նոր շնորհի առիթով, տեղի ունեցաւ ակնկալածից աւելի շքով և դարձաւ մի հոյակապ ցոյց ժողովրդի կողմից, ուղղված Թագաւոր Կայսրի և Հայոց Եկեղեցւոյ պէտք հասցնելու:

Ժամը 12-ին, Վանքի բակում խանդավառ 10,000 հոգու բազմութիւն, բոլոր դէմքերը՝ ուրախ, զուարթ, ժպտուն. ամենքը՝

չէ արվում մասնակցելու վիճաբանութիւններին:

6) Ընտրողական ժողովի և խորհրդակցութեան նախագահները պարտաւոր են հող տանել կարգի պահպանման և զբաղմունքների խաղաղ ընթացքի մասին. դրա համար նրանք օգտվում են սրան կցված նահ. հաստատ. II հատորի 179—191-րդ յօդուածներում բացատրված իրաւունքներով:

7) Ընտրողական ժողովները, նոյնպէս և խորհրդակցութիւնները կայանում են՝ որքան էլ որ ընտրողներ և ընտրված ներկայացուցիչներ կեանք լինեն:

8) Ընտրողական ժողովները և գաւառական խորհրդակցութիւնները արձանագրութիւնները բոլոր նիւթերով միասին, նիստերը վերջանալուց յետոյ, անյապաղ յանձնվում են գաւառագետին՝ նահանգապետի միջոցով ներկայացնելու նահանգական (ըրջանային) խորհրդակցութիւններին:

9) Խորհրդակցութիւններին արված տեղական լիզուներով բոլոր զեկուցումները և այլն պէտք է ունենան հետները կից նաև ուղեւորէն թարգմանութիւնը:

19) Եթէ արդէն բոլորովին անհնար է գաւառական (օկրուգի) խորհրդակցութիւններն սկսել օգոստոսի 15-ին, և նահանգականները (ըրջանային)—սեպտեմբերի 1-ին, կարելի է նրանց բացումը յետաձգել, բայց երկուշաբթից երբէք ոչ աւելի:

Հրահանգի I լաւիլոված (ՕՐԵՆՍԳՐԻ Կատար II, հրատ. 1892 թ. Նահ. Հատ. Հիմնարկ):

Յօդուած 179. Ժողովի իւրաքանչիւր նիստը բաց է անում և փակում է Նախագահը, որը և նշանակում է նրա զբաղմունքների կարգը. բայց եթէ ժողովը անգամներ շնորհի կամ եթէ կառավարութիւնը պահանջէ, նոյնպէս եթէ լինեն ուրիշ յարգելի պատճառներ, Նախագահը կարող է փոխել նշանակված կարգը: Յօդ. 180: Նախագահը պարտաւոր է ժողովի զբաղմունքներն ուղղել դէպի իր իրաւասու-

միմանց որդեկան, որդեկանութիւնս և շնորհաւորութիւնս էին կարեւորագոյնը և զարդոցներէ վերաբերեալ: Հայ հոգեւորականութիւնն ևս աշխատել էր իր կողմէն մեծ փայլ տալ հանդէսին. պատարագին էր Գարեգին արքեպիսկոպոս Սաթուհեանը, իսկ մաղթանքին մասնակցում էին Գէորգ արքեպիսկոպոս Սուրենեան, Նահապետ եպիսկոպոս Նահապետեան, Գորիսն վարդապետ Գրիգորեան, Նիսիսն վարդապետ Սուրենեան, կոնստանտնուպոլիսի նախարարը, Գարեգին վարդապետ Յովսէփեան՝ Սրեանի զորանոցի տեսուչը, Յովսէփ վարդապետ՝ դիւանապետ և թիֆլիսի եկեղեցիներէ քահանայական դասը: Առաջնորդարանի սանդուխները ծածկված էին զորքերով և զարդարված թարմ ծաղիկներով, իսկ ամբողջ բակը զօրշաղկներով: Երբ պատարագը վերջացաւ և պատարագիչը ամբողջ հոգեւորականութեան հետ դուրս եկաւ եկեղեցուց՝ բակը, որի կենտրոնում պէտք էր կատարվէր մաղթանքը, առաջնորդարանից դուրս եկաւ հայրապետական շքով ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոս Մկրտիչ I, հայրապետական խաչ և դաւազանք առաջին: Հազիւ նա երեսոց սանդուխների գլխին, որ բերաւոր շրթունքներից բարձրացաւ մի որոտնդոտ աղաղակ—«կեցցէ, կեցցէ»: Ինչնով սանդուխներից, Վեհափառ մատաւ ամպնովառ տակ և առաջնորդից եկեղեցական թափօրով մաղթանքի տեղը:

Կարգացից Վեհ. Հայրապետի կոնդակը, ուղղված Սոսի տան կաթողիկոսին, Երուսաղէմի և Կ. Պոլսի պատրիարքներին, բոլոր թեմական առաջնորդներին, վանահայրերին, ամբողջ Հայոց ազգին, որով Գրիգոր Լուսաւորչի յաջորդը յայտնում է, թէ Հայաստանեայց եկեղեցին երկու տարի է ընկնում էր սուգի մէջ, թայց Ռուսաց Մեծազոր Կայսր Նիկոլայ II շտապեց իր արդարադատ ակառով վերացնել այդ սուգը և լցնել ամենքի սիրտը ուրախութեամբ և ցնծութեամբ, ուստի և նա, իբրեւ Լուսաւորչի յաջորդ, իբրեւ եկեղեցու պետ, հրաւիրում է ամենքին և կաթողիկոս, պատրիարք, և առաջնորդ, և հոգեւորականութիւն և ժողովուրդ աղօթել արդարադատ Կայսրի երկարակեցութեան համար, նրա այդ որդրած և մարդասէր-արդարադատ շնորհի մասին: Կոնդակի ընթերցումից յետոյ Գարեգին վարդապետ Յովսէփեան մի քարոզ խօսեց, որի միտքն այն էր, թէ Հայոց եկեղեցի և ժողովուրդը անխելով կայծերով շաղկապված են իրար հետ, որ չը կայ եկեղեցի առանց ժողովուրդի և դրա համար հայ հոգեւորականութիւնը ժողովուրդի հետ միաբան և միահամուռ ջանքեր գործ դրեց՝ իր բոլորը հասցնել Թագաւոր

թեան տակ եղած գործերի քննութիւնը և դէպքի կանոնաւոր լուծումը այն հարցերի, որոնք առաջ են գալիս այդ գործերի քննութեան ժամանակ:

Յօդ. 181: Ժողովի անդամները բոլոր խորհրդածութիւններն ուղղվում են Նախագահին, որը, առաջարկելով հարցերն իրար ետեւից, պաշտպանում է հարկաւոր կարգը և առարկայի միութիւնը, իսկ կարծիքների տարաձայնութեան դէպքում, նրանց համաձայնեցնելու համար, կրկնում և աւելի մանրամասն բացատրում է հարցի էութիւնը և ուժը:

Յօդ. 182: Նախագահը հակում է, որ բերանացի դատողութիւններն ամեն մէկ անդամն առանձին առնէ և որ մէկի ձայնը չընդհատվի միւսի ձայնով:

Յօդ. 183: Հարցից և գործի էութիւնից հետեւող դատողութիւնները Նախագահն ուղղում է դէպքի հարցն ու գործը. եթէ յաճախ կրկնվում են հարցից հետեւող դէպքերը, նախագահն ընդհատում է դատողութիւնը և անցնում հետեւեալ հարցին:

Յօդ. 184: Նախագահն ընդհատում է ժողովի այն անդամին, որը հեռանում է կարգը պահելուց կամ օրէնքը յարգելուց, և եթէ այդ մասին երկու անգամ ինչեցնելն ապարդիւն անցնի, զրկում է այդ անդամին խօսելու իրաւունքից այն հարցի մասին, որի առիթով թոյլ էր տուել նա կարգի խանգարում:

Յօդ. 185: Մի կամ մի քանի անդամներն այն առաջարկը, որ Նախագահը կը համարէ օրէնքին անհամաձայն կամ ժողովի իրաւասութեան շրջանից դուրս, այլ ևս քննութեան չեն ենթարկվում:

Յօդ. 186: Նախագահի նախընթաց յօդուածով (185) անխաղձված վճռից դժգոյ ժողովականները իրաւունք ունեն այդ մասին իրանց կարծիքը գրաւոր յայտնել և կցել ժողովի արձանագրութեանը:

Յօդ. 187: Եթէ ժողովի անդամները կարգը կը խանգարեն և եթէ Նախագահի ջանքերը

Կայսրի լսելիքին և արդարադատութիւն հայեցել այդ արդարադատութիւնը եղաւ և թէ հայոց եկեղեցին, թէ հայոց ազգը այսօր լըցված են երախտագիտութեամբ առ Կայսրը, որ ճանաչելով հայերի բողոքի արդարութիւնը, հրամայեց զօհաբերել նախ նրանց պահանջներին:

Ապա սկսվեց մաղթանքը Վեհափառ Հայրապետի հանդիսադրութեամբ: Եկեղեցական դասը կարգաց և երգեց կայսերական մաղթանքի համար տնօրինված աղօթքները ու շարականները: Հազիւ մաղթանքը աւարտվեց, որ որոտնդոտ կեցցէները նորից թնդացին, մինչ ծերունի Հայրապետը նոյն հայրապետական թափօրով վերադարձաւ առաջնորդարան: Այնուհետեւ ժողովուրդը սկսեց երգել ազգային երգեր և ամբողջ երկու ժամ ցնծութեան և ուրախութեան աղաղակներ էին լսվում Վանքի բազում և շրջապատում:

Վերադառնալով առաջնորդարանը, Վեհափառ Հայրապետը ուղարկեց Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրին և Կովկասի Փոխարքային հեռագիրներ, որոնց բովանդակութիւնը առաջ երբեք մայսօր: Իսկ հայ հասարակութեան կողմից ևս, եկեղեցիներից երեցփոխների ստորագրութեամբ, ուղարկվեց Կիսլովոդսկ Կովկասի Փոխարքային մի հեռագիր, որի բովանդակութիւնը նոյնպէս առաջ երբեք:

Եւ այսպէս, երկու տարի առաջ եղած սուգը կիրակի օրվայ հանդէսով վերացվեց ու փոխվեց ցնծութեան և հրճուանքի:

Տպւում են և Թագաւոր Կայսրի հեռագիրը:

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԻՆՉՊԵՍ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ԳՐԻՐՈՒ

—

Վերջապէս ծագեց արդարութեան և ներդաշնակ կեանքի այն արշալոյսը, որին անհուկութեամբ սպասում էր ամբողջ հայ ազգը: Կովկասի Փոխարքայ Ի. Ի. Վորոնցով-Դաշկով մի հոյակապ շարժումով լցնում է այն վիճը, որ բացել էր Գոլիցինեան անհեռաւսն ըէփը: Եւ հայ և ռուս ժողովուրդները մէջ Նա վերադառնալ հաստատում է այն կեանքը, որով անկեղծօրէն հաղորդակցում էր հայ հոգին ռուսականին հետ:

Մասնաւորաբար Ռուսահայաստանը ցնծութեան մէջ է, և իրաւունք ունի ցնծալու, որովհետեւ այնքան դառնութիւններից, այնքան անտեղի հալածանքներից, այնքան վնասութիւններից և լուսնիներից, յետոյ, ահա նրա առաջ նորից բացվում է ազատ զարգացումի, կուլտուրական գործունէութեան թուականը:

դուր կանցնեն այդ խանգարված կարգը վերականգնելու, նա պարտաւոր է ներսուր փակել:

Յօդ. 188: Նախագահի բարեհայեցողութեան է յանձնվում հեռացնել ժողովի խորհրդակցութիւնների ժամանակ ներկայ եղող կողմնակի անձերին: Եթէ նահանգական իշխանութիւնը պահանջէ, Նախագահը պարտաւոր է հեռացնել այդ անձերին:

Յօդ. 189: Ժողովում ներկայ եղող բոլոր անձերը պարտաւոր են պահպանել քաղաքականութիւնը, կարգը և հանգստութիւնը, անշեղ հպատակվելով այդ քանի վերաբերմամբ Նախագահի կարգադրութիւններին:

Յօդ. 190: Որ և է բանում նախընթաց (189) յօդուածում յիշված կարգը խանգարող կողմնակի անձերը կարող են Նախագահի կարգադրութեամբ, հեռացվել ժողովից, իսկ իր այդ կարգադրութեանը, չը հպատակվողին Նախագահը հրամայում է դուրս հանել:

Յօդ. 191: Երբ անկարելի է լինում ջոկել կարգը խանգարողներին և երբ Նախագահի ներշնչութեամբ ապարդիւն են մնում, Նախագահը հեռացնում է բոլոր կողմնակի անձերին:

Հրահանգի II յաւելում

Յ Ո Ւ Յ Ա Կ

դաւադական (օկրուգի) և նահանգական (2Ըր-շանային) խորհրդակցութիւններում մասնակցող ներկայացուցիչներին թիւի, քննելու համար զեմատվային անտեսութեան բարեփոխութեան հարցն Անդրկովկասում:

Կալուածատէրերից:	Կալուածատէրերից:	Կալուածատէրերից:	Կալուածատէրերից:	Կալուածատէրերից:	Կալուածատէրերից:	Կալուածատէրերից:	Կալուածատէրերից:	Կալուածատէրերից:	Կալուածատէրերից:
Յօդ. 187:	Յօդ. 187:	Յօդ. 187:	Յօդ. 187:	Յօդ. 187:	Յօդ. 187:	Յօդ. 187:	Յօդ. 187:	Յօդ. 187:	Յօդ. 187:

Կոմս Փոխարքան իր այս գեղեցիկ քայլով կատարում է ոչ միայն արդարութեան՝ այլ և հայրենասիրութեան մի գործ:

Երբ Կովկասի նախկին բարձր իշխանութիւնը հեղաշրջվեց ևս պետութեան դարաւոր անհաշու ծախսերին հայ ազգը նկատեց իբրեւ մի անխտանելի տարր, երբ նրան սկսեց հաւաքել այն զայրացուցիչ միջոցներով ու ձեւերով, որոնց վերացումն է հոչակում այժմ Կայսերական Հրովարտակը, այն ժամանակ նա փշրեց ոչ միայն Ռուսահայաստանի համակրանքը դէպի Ռուսաստանը և տեղի տուեց դժգոհութեան յայտնի դէպքերին, այլ և խորագէտ ցնցեց, վրդովեց հայ ժողովուրդի այլ և այլ հատուածներին, գլխաւորաբար Թիւրքիայի և Պարսկաստանի հայութեան սիրտը, այսինքն այն տարրերի սիրտը, որոնք միշտ պատրաստ են եղել ծառայելու ռուսական շահերին և ազդեցութեան:

Մահաբեկական երկրում ապրող հայութեան այդ երկու հատուածները միշտ իրանց սրտի մօտիկ են դաքցել քրիստոնեայ պետութեան դատը, նրանք միշտ եռանդուն ու անձնազոհ գործծներն են հանդիսացել Ռուսաստանի, թէ քաղաքական և թէ տնտեսական բարձր շահերին: Եւ ինչ որ եւրօպական միւս պետութիւնները անկարող են եղել իրանց զբաղմունքի և այլ խոշոր գոհողութիւններով աշոյղեցնելու, Ռուսաստանը կարողացել է՝ և միմիայն այն ուժով, որ ընծայում էր նրան հայ ցեղի քնակալ համակրութիւնը: Սա այնպիսի փաստ է, որի լուսաբանութեան ձեռնարկելը պիտի նշանակէր նորից կրկնել այն՝ ինչ հարեւաւոր անգամներ ասված է:

Նախկին քաղաքականութիւնը զայրացրեց ահա այս ցեղին, որ ոչնչով չէր արդարացրել Ռուսաստանի թշնամական վերաբերմունքը: Եւ ինչի մէջ էր մեղադրվում հայը, Հայակերները ամբաստանում էին նրան քաղաքական որոշ նպատակներ մոռցածնելու մէջ. ուղում էին հաւատացնել, որ հայը ձգտում է անկախութեան, և այնպիսի տիրապետութեան, որի սահմանները տարածվում են մինչև... Բոսսօփ: Այո, ոչ պակաս:

Բայց նրանք, որ հայերին մեղադրում էին այդ տեսակ ձգտումներ մոռցածնելու մէջ, կամ հայերին ենթադրում էին չափազանց արամաւ և կամ իրանց լսողներին՝ չափազանց միամիտ, պարզապէս: Այլապէս ո՞ր խելքը գլխին մարդը կարող էր հաւատալ, որ հայերը կարող կը լինեն այդքան անմիա յաւակնութիւններ ունենալ: Ո՞րտեղ պիտի հաստատէին հայերը այդ տիրապետութիւնը: Ռուսաստանում: Դա պարզապէս ծիծաղ է յարուցանում: Պարսկաստան

ում: Ի հարկէ ոչ Ուրեմն Թիւրքիայում: Արդ, նրանք որ հաւատում են, թէ հայերը ամբողջապէս ցնորամիտներ մի համախմբութիւն չեն ներկայացնում, առանց դժուարութեան պիտի ըմբռնեն, որ հայերը ինքնիշխանութեան յաւակնութիւններ չէին կրող ունենալ և Թիւրքիայում: Թիւրք պետութիւնը բաւական ուժեղ է թոյլ չը տալու համար, որ մի անկախ իշխանութիւն ստեղծվի այն մի պատառ հողի վրա, որ մնում է իր անսահման կայսրութիւնից:

Ինչ որ հայերը ցանկացել են և ցանկանում են, այդ այն է, որ իրանց եղբայրները Թուրքի, Եւրոպի անասնձ կամայականութեան տակ յաւիտենական մարտերունը չը դառնան, նրանք ունենան այն՝ ինչ չէ զլացվում ամեն գործարանաւոր էակը—կեանքի և ապրուստի ապահովութիւն, ուրիշ ոչինչ: Միթէ սա մի ուժի է: Ամեն ազնիւ ու խղճաւոր անձի պատասխանը մի կարող է լինել—ոչ:

Ահա ինչու համար Գոլիցինեան քաղաքականութիւնը հակառակ էր ոչ միայն արդարութեան, այլ և Ռուսաստանի իսկական շահերին: Նա մահացու կերպով վերաւորեց հայութեան հոգին իր անվատահաւթեամբ, իր հաւատաւնքներով, նա քանդեց, խլողեց այն նիւցուղը, այն աշակիցը, որ եղել էր և պատրաստ է լինելու այժմ հայ ժողովուրդը ռուս ազդեցութեան համար ամեն տեղ:

Նրանք, որ վերջին ժամանակներում դաւաճել են Թիւրքա-Հայաստանում, պիտի հաստատեն այն խորունկ ցաւի, սրտածմբի մորմոքի մասին, որ արտայայտում էր հայ ժողովուրդը Ռուսաստանի ներկայ դժբաղդութեան հանդէպ: Ականատեսները պատմում են, որ հայերը սրտից արին էր գնում, երբ լսում էին Ռուսաստանի անաշտողութիւնները:

Ահա այս ժողովուրդն է, որ հաւատվում էր: Նրանք պայծառափայլութիւնը՝ կոմս Վորոնցով-Դաշկով, սրբելով հայ ժողովուրդի ճակատից անվատահաւթեան արատը, վերադարձնելով նրան ինքնակրթութեան, ազատ զարգացման միջոցներն ու դիւրութիւնները, կատարում է անկեղծապէս ոչ միայն արդարութեան, այլ և ճշմարիտ հայրենասիրութեան մի գործ, որովհետեւ, մենք համոզված ենք, որ նրա այդ գեղեցիկ քայլը արժանանք գտնելով ամեն տեղ, ուր ապրում, գործում է հայը՝ նորից պիտի կապէ հայը ռուսի հետ, նորից պիտի ստեղծէ համակրանքի, սիրոյ, յարգանքի այն բարեբար միջնորդը, որ հայ հոգին հաղորդվում էր ռուսական մեծ հոգու հետ:

Տիգրան Զաւեն

Ախալքալաքի գաւ.	3	4	2	11	20	4	2	8	26	16	29	6
Ախալքալաքի գաւ.	6	2	3	9	20	4	7	—	18	29	6	
Բօրչալուի գաւ.	10	15	—	14	39	8	4	7	4	13	28	6
Գօրու գաւ.	10	15	2	13	40	8	3	7	4	15	29	6
Դուշէթի գաւ.	9	6	2	13	30	6						44
Սոնախի գաւ.	4	6	2	13	25	5						
Թէլաւի գաւ.	6	10	2	13	31	6						
Թիւրքի գաւ.	4	4	—	16	24	5						
Զաքաթ. շրջանում	8	2	15	25	—	54						
Գուրպախի գաւ.	6	8	4	13	31	6						
Ծօրապանի գաւ.	4	12	—	14	30	6						
Բաշինի գաւ.	3	6	—	11	20	5						34
Օղուրդէթի գաւ.	6	12	2	13	33	7						
Լէյլուի գաւ.	6	18	—	12	36	7						
Սէնաքի գաւ.	6	18	32	11	37	8						
Զուգդիդի գ. Է.	4	12	23	18	36	7						
Բաքուի քոչ. համար						46						
Բաթումի բաժին	9	5	9	23	5							
Արթւին բաժին	9	24	9	20	4							
Սուխումի շրջանում	10	3	12	25	—	9						
Բազուի գաւ.	3	3	10	15	31	6						12
Գիւրգալի գաւ.	3	4	—	17	25	5						
Զալաղի գաւ.	3	4	25	13	22	4						
Դուրալի գաւ.	3	4	3	15	25	5						
Լէյնօրանի գաւ.	4	8	2	15	29	6						
Շամախու գաւ.	3	4	4	15	26	5						
Գաճակի գաւ.	4	4	4	16	28	6						
Արեւի գաւ.	2	3	—	15	20	4						
Զաքաթի գաւ.	3	7	—	14	23	5						
Զելանդի գաւ.	5	5	—	17	27	5						40

2) Փօթի քաղաքից—3:
3) Զուգդիդ ամառից—1 և Բէլուս Կալէ ամառից—1:
4) Արթւին ամառից:
5) Սախան ամառից:
6) Գօրիս ամառից:

7) Նախիջևան ք.—2 և Օրդուքաղ ամ.—1
8) Պետրոփոլի ք.—4 և Թէմիր-Պան-Շուրա ք.—2

1874 թ. ԹԻՒ ՅՈՒԼԻՍԻ 19 ԿԱՅՍԵՐԱՀԱՍՏԱՏ
ԿԱՆՈՆԵՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԵՆԵՆԵՐԸ ԳՐԱՐՈՑ-
ՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Օգոստոսի 1-ի Բարձրագոյն հրովարտողը հայոց եկեղեցուն՝ «յօգուտ ժողովրդի լուսաւորութեան գործելու ընդարձակ միջոցներ շնորհելով», յանձնարարում է Փոխարքային, թոյլ տալ եկեղեցիներին և վանքերին կից դպրոցներ բանալ՝ 1874 թ. յուլիսի 19-ի Բարձրագոյն հաստատութեամբ կանոններ հիման վրայ, մինչև որ հայոց եկեղեցական ուսումնարաններ մասին նոր օրէնսդրութիւն կը մշակվի: 1874 թ. կանոններ մասին արդէն խօսվել է «Մշակի» 126-րդ №-ում: Նոյն կանոնները ամբողջական թարգմանութիւնը տը-պագրվել «Մշակի» նախանցեալ համարում: Մակայն յիշեալ կանոնները ընդհանուր կերպով շարադրված լինելով, ըստ ինքեան, առանց լրացուցիչ բացատրութիւնների և անհրաժեշտ տեղեկութիւնների, լրակատար գաղափար չեն տալիս, թէ դրանց հիմամբ մեր եկեղեցական դպրոցները գործել ինչ վիճակ է ունենալու, որով պարզ չեն երևում այդ կանոններով ընձեռնվող յարմարութիւնները: Նրա համար պէտք է համեմատութեան դնել 1874 թ. կանոնները 1884 թ. դպրոցական օրէնսդրութեան հետ, և այն ժամանակ պարզ երևան կը գան առաջինի ունեցած առաւելութիւնները: Մի և նոյն ժամանակ կը տեսնվի, որ 1874 թ. կանոններով եկեղեցական ուսումնարաններին շնորհած վիճակը իրաւամբ լուսաւորիչ գործունէութեան ընդարձակ առաջադէպ կարելի է կոչել:

Եկեղեցուն տրված լուսաւորիչ գործունէութեան վիճակը ընդհանուր կերպով կէտ պէտք է ի նկատի առնել. եկեղեցու դպրոցական իրաւաւորութեան մէջ՝ ծաւալի չափը և երկրորդ անկախութեան աստիճանը, այսինքն թէ եկեղեցին ինչ տեսակ ուսումնարաններ վարելու իրաւունք ունի:

Առաջին հարցին 1874 թ. առաջին կանոնը ընդհանուր կերպով էր պատասխան տալիս, սահմանելով թէ եկեղեցական իշխանութիւնը իրաւունք ունի առհասարակ «եկեղեցական ուսումնարաններ» պահելու, առանց այս գաղափարը մասնաւորելու կամ սահմանափակելու. իսկ 1884 թ. առաջին կանոնն անտի էր՝ թէ եկեղեցական ուսումնարանները միմիայն «ազգային» (սկզբնական) միջաւան և երկրորդական դպրոցներ» կարող են լինել, ուստի մինչեւ 1874 թ. կանոնները չէին արգելում մեր եկեղեցու տարրականից բարձր (օր. չորսդասնեան) դպրոցներ ունենալ, որպիսիները և իւրօր գոյութիւն ունէին մի քանի քաղաքներում և վանքերում, 1884 թ. օրէնսդրութիւնը ստիպեց փակել այդ դպրոցները բարձր դասարանները և դպրոցը կը ճաւելուր տարրականի վերածել:

Դաւով եկեղեցու կողմից իր դպրոցները անկախօրէն անօրինելու և վարելու իրաւունքը՝ նոյնպէս մեծ տարբերութիւններ տեսնում վերոյիշեալ երկու օրէնսդրութիւններին մէջ: 1874 թ. կանոնները եկեղեցական դպրոցների ամբողջ վիճակը, թէ ուսումնական և թէ վարչական կողմից, գրեթէ ամբողջովին և կատարելապէս եկեղեցական իշխանութեան էին յանձնում, սահմանելով լոկ անշուն սահմանափակումներ՝ մէկ որ անպատճառ աւարտում են ուսաց աւարականները ու ուսանելի լինողը, և երկրորդ՝ որ ուսուցանողները ուսաստիպատակ և քաղաքականապէս վստահելի *) անձեր լինեն: Որքան էլ անշուն ու բնական լինէին այս պահանջները, բայց և այնպէս դպրոցը անկախ կառավարելու իրաւունքի որոշ սահմանափակումներ էին դրանք. քանի որ օր. առաջ ուսանելի մեր դպրոցներին իրանք էին աւանդում ինքնաշարժ կերպով, մինչեւ այդ կանոնը արդէն պարտադիր էր դարձնում: Բայց և այնպէս, թէ ինչ աւարականներ և ինչ ծրագրով են աւանդվելու եկեղեցական դպրոցում, այդ ընդհանրապէս եկեղեցական իշխանութեան անօրինութեան էր թողնված, միայն թէ աւանդում էին նաև ուսաց լինողն, ուսաց պատուութիւն և Ռուսաստանի աշխարհադրութիւնը, որոնց ծրագրերը մակայն դարձեալ նոյն եկեղեցական իշխանութիւնը էր սահմանում:

Իսկ 1884 օրէնսդրութիւնը, թէ և նոյնպէս

*) Օրէնքի մէջ իսկապէս հարկում ու պատշաճ բաժնոյական յատկութիւններին տէր լինելի է պահանջվում ուսուցանողները. սակայն, այդ հետաքրքիր դարձածով միմիայն քաղաքական վստահելիութիւն կարելի է հասկանալ, ինչպէս և հասկացվել է ժամանակին: Բայց և այնպէս օրէնքի դրոշմածած այդ դարձուածքի առաւելական անձնաւորութիւնը կարող է և թերեմայն թիւնները տեղի տալ:

եկեղեցական իշխանութեան էր յանձնում մեր ուսումնարանները տեսչութիւնը (յօդ. 2), բայց պարտաւորեցնում էր այնպիսի պայմանների ենթարկվել (յօդ. 6), որոնցով պետական ուսումնարանական վարչութեանը բաւականին ընդարձակ իրաւունքներ էր տրվում մեր դպրոցների կառավարմանը միջամուկ լինելու: Թէ ըստ ուսումնականի և թէ ըստ վարչականի: Թէ 1874 թ. և թէ 1884 թ. կանոնները պահանջում էին, որ մեր բոլոր եկեղեցական դպրոցներում աւանդվի ուսաց լեզու, իսկ այն դպրոցներում, որտեղ աշխարհադրութիւն և պատմութիւն է աւանդվում, աւանդվի նաև ուսաց պատմութիւն և Ռուսաստանի աշխարհադրութիւնը: Մակայն մինչեւ 1874 թ. կանոնները պահանջում էին լոկ, որ այդ ուսական աւարականները աւանդվին, 1884 թ. օրէնսդրութեան 5-րդ յօդուածը մի նոր պահանջ էր աւելացնում՝ որ այդ աւարականների աւանդման ծաւալի, ծրագրի, դասերի թւի և դասադրերի որոշումն ու ընտրութիւնը պետական ուսումնարանական վարչութեան համաձայնութեամբ կատարվի. և ահա մինչեւ 1874 կանոնները ինսպեկտորներին իրաւունք էին տալիս նայելու, որ ուսական աւարականները լոկ աւանդվին, 1884 թ. նրանց հրամայում էր հետաւոր լինել նաև թէ ինչպէս են աւանդվում այդ աւարականները:

Բայց այդ դեռ քիչ է: Մինչեւ 1874 թ. կանոնները պետական ուսումնարանական վարչութեան իրաւունք չէին տալիս հսկելու և ոչ մի աւարականի դասաւարդմանը մեր եկեղեցական դպրոցներում, 1884 թ. նրա, ոչ միայն յիշեալ ուսական աւարականների այլ մնացած բոլոր աւարականների (բացի կրօնից) դասաւարդմանը վրա հսկելու իրաւունք էր տալիս նոյն վարչութեանը: Այսպիսով պետական ուսումնարանական վարչութիւնը եկեղեցական դպրոցների վարչական մասին միջամտելու իրաւունք էր ստանում: Թէ 1874 և թէ 1884 թ. օրէնքները ուսուցիչներ նշանակելու և արձակելու իրաւունքը եկեղեցական իշխանութեան էին վերադրած, սակայն 1884 թ. 7-րդ յօդուածը պետական ուսումնարանական վարչութեան իրաւունք տալով բոլոր ուսուցիչներին դասաւարդմանը հսկելու, մի և նոյն ժամանակ ուսումնարանական շրջանի հոգաբարձուն էլ իրաւունք էր ստանում, որ՝ եթէ ուսուցիչները մէկին իր կողմէն անհամապատասխան տեսնէ, դէմ է եկեղեցական վարչութեանը ուսուցչին այսպիսով պաշտօնից հեռացնելու մասին. իսկ եթէ եկեղեցական վարչութիւնը իր այդ պահանջը չը կատարէր—յայտնել այդ մասին Մինիստրին և Կովետայի կառավարչապետին, որը և իր կողմից անելու էր ինչ որ բարեւոր կը դատէր: Ուսուցիչների՝ իրանց կողմէն համապատասխան լինելու վրա հսկելու այս իրաւունքը յետագայում ցնցելի խնդիր առաջ բերեց, մինչեւ 1874 թ. օրէնքը այդպիսի բան իր մէջ չը պարունակելով՝ ուսուցիչներն ուսման ցնցող ունենալու խնդիրն էլ ամբողջապէս եկեղեցական իշխանութեան հայեցողութեան էր ենթարկում: Եւ 1884 թ. օրէնսդրութիւնը պետութեանը հսկելու այսպիսի իրաւունք էր տալիս նաև մինչև անգամ թեմական տեսուչների նկատմամբ:

Ուսումնարանների անտեսական մասի երկու օրէնսդրութիւնն էլ եկեղեցական իշխանութեան են ենթարկում. միայն թէ, մինչեւ 1874 թ. կանոնները որոշապէս յայտնում են, որ պետական ուսումնարանական վարչութեանը իրաւունք չէ տրվում եկեղեցական դպրոցների անտեսական մասին միջամուկ լինելու, 1884 թ. նրա մասին ոչինչ չէ ասւում. բայց քանի որ այս վերջին օրէնսդրութիւնը սահմանում էր, որ եկեղեցական ուսումնարանները կամ բացառապէս եկեղեցապատկան և վանքապատկան միջոցներով կամ ծխականների օժանդակութեամբ են պահվելու, և պահանջում էր, որ եկեղեցական վարչութիւնը մի դպրոց բաց անելիս պ. Հոգաբարձուն տեղեկացնէր նաև թէ նորաբաց դպրոցը ինչ միջոցներով է պահվելու՝ կարծես մեր եկեղեցական դպրոցների կառավարմանը այս կողմից էլ միջամտելու սկիզբն էր դրվում դրանով:

Ուրեմն, 1874 թ. օրէնքը պետութեան կողմից պահանջ դնելով միմիայն, որ հայոց դպրոցներում աւանդվին, ուսաց (պետական) աւարականները ու ուսուցիչները պետական տեսչականից անկախաբէր չը լինեն՝ այնուհետև եկեղեցական իշխանութեան է թողնում ուսումնարանական գործի ամբողջ վիճակը. եկեղեցին ինքն էր դպրոցներ բաց անում

և փակում, ուսուցանողներ նշանակում և արձակում, սահմանում աւանդվելիք աւարականները (բացի ուսականներից, որ անպայման պիտի լինեն), որոշում բոլոր աւարականների ուսումնական ծրագրերը, ընտրում դասադրերը, վճարում դասարանների թիւը, հաստատում դպրոցները կառավարելու կանոնադրութիւնը: Օգոստոսի 1-ի Բարձրագոյն հրովարտակի հիմամբ նոյն օրից սկսած գործող օրէնք են դառել 1873 թ. կանոնները. նոյն այդ օրվա մէջ սկսած մեր եկեղեցին ձեռք է բերել ուրեմն նոյն կանոններում յիշված իրաւունքները: Եւ քանի որ դպրոցներ բանալ և կառավարել առանց վարչական կանոնադրութեան և ուսումնական ծրագրի անհնարին է, իսկ 1874 թ. կանոնների հիմամբ մեր եկեղեցական ուսումնարանները եկեղեցու սահմանած կանոնադրութեամբ և ծրագրով են վարվելու, ապա հետեւաբար եկեղեցական իշխանութեան վրա ստիպողական պարտք էր դրվում անյապաղ ձեռնարկել ուսումնարանական կանոնադրութեան և ծրագրի շտապագոյթ մշակմանը:

1874 թ. օրէնքը ծամամախառնապէս է գործադրութեան յանձնվում և Փոխարքային յանձնարարվում է անյապաղ ձեռնարկել հայոց եկեղեցական դպրոցների համար նոր օրէնք հրատարակելու: Մակայն քանի որ Բարձրագոյն հրովարտակը հանդիսաւոր կերպով յայտարարում է, որ Կայսրը այսուհետև լուսաւորել գործունէութեան ընդարձակ հնարաւորութիւն է շնորհելու հայոց եկեղեցուն, ապա ապահովապէս յուսաւոր ենք, որ մօտ ապագայում հրատարակվելիք յիշեալ նոր ուսումնարանական օրէնսդրութեան գործութեամբ էլ 1874 թ. օրէնքի առաւել ոչ պակաս անկախութիւն և ընդարձակ գործունէութեան ազատութիւն է վայելելու մեր եկեղեցին:

Ս. Տիգրանեան

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՈՒԿԱԶԻ ՄԻ ԿԵՏԸ

Եկեղեցական կալուածների վերադարձման և հայ դպրոցների վերաբարձան Բարձրագոյն ուղարկ մէջ մի կէտ առանձնապէս դրաւեց իմ ուղարկութիւնը: Այդ կէտը հետեւեալն է. «Հրամայելով ներքեւում յիշված հիմունքներով վերադարձնել հայոց եկեղեցական հաստատութիւններից առկած գոյքերը, Մինք թոյլատրում ենք Մեր Փոխարքային իրան ենթակայ իրերի սահմաններում այժմ և եթէ ժամանակաւոր գործադրութեան մէջ մտցնել, մինչև օրէնսդրական կարգով ընտելը, կազմված կանոններ, որոնք պէտք է ապահովեն ծխականների մասնակցութիւնը եկեղեցական գոյքերի կաւալարելու գործի մէջ»:

Տեսնում էք, ընթերցող, Կայսերական ուղարկ հրամայում է, որ ծխականներին տրվի իրաւունք եկեղեցական գոյքերի կառավարութեան մէջ մասնակցելու:

Բայց արդեօր դա ինչ իրաւունք է և մի գոյքերի կառավարութիւնն է ամբարկված:

Կարելի է ենթադրել, որ Բարձրագոյն ուղարկ այդ կէտը վերաբերում է արդէն գոյութեան ունեցող մի սովորութեան: Եւ որ մեր քաղաքները ու գիւղերը բոլոր եկեղեցիներն ունեն երէցփոխներ, որոնք ժողովրդից են ընտրվում և որոնք կառավարում են իրանց եկեղեցու գոյքերը:

Բայց միթէ այդ բանը կարող էր լինել ուղարկ համար ներքեւ, միթէ արժէր դրա վրա յատկապէս շեշտել, չէ որ դրա համար կայ պարզորոշ պետական օրէնսդրութիւն 1836 թ.ից գոյութիւն ունեցող: 1908 թ. յունիսի 12-ի Բարձրագոյն ուղարկով եկեղեցական ու դպրոցական գոյքերը խելուց յետոյ էլ երէցփոխներ կան, համաձայն ազգային սովորութեան և պետական օրէնսդրութեան, և նրանք այս երկու սե տարիներում վարում էին իրանց ծխական եկեղեցու գոյքերի գործերը:

Ուրեմն՝ էլ ինչ կարելի կար հղածն ու օրէնքով հաստատվածը, որը ամենին վէճի առարկայ չէ, նորից յիշատակել մի Բարձրագոյն ուղարկ մէջ:

Մեր կարծիքով, Բարձրագոյն ուղարկ վերելու մէջ յիշված կէտը վերաբերում է ոչ միայն ծխական եկեղեցիներ գոյքերի վարչութեանը, այլ և եկեղեցական, վանական ու դպրոցական բոլոր կալուածներին կառավարութեան հարցին:

Եւ արդարութիւնն էլ այդ է պահանջում: Ժողովուրդն է դարձել ընթացքում նուրբել իշխաններն ու վանքերին, դպրոցներին ու եկեղեցիներին:

դեցիներին այդ կալուածները, նա էլ պէտք է ձայն ունենայ դրանց վարչութեան մէջ:

Վերջին երկու տարիներում հայ հոգեւորականութիւնն ու ժողովրդի բանիմաց ու օրէնքի սահմաններում գործող ուժերը միացել են. նրանց բաժանող խորխորատը, սե ու կարմիր դէպքերի ազդեցութեան տակ, բաւական լցվել, չքանալու է մօտեցել:

Պէտք է յուսաւոր, որ բոլոր եկեղեցական կալուածները ընդհանուր Ազգային Վարչութիւնը վերջնականապէս կը միաձուլէ նրանց:

Խաթակ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» ներկայ համարը բաղկացած է 1 1/2 թերթից:

Երէկ, օգոստոսի 8-ին, ժամը 12-ին ցերեկվայ, Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսը, ուղեկցութեամբ Գարեգին արքեպիսկոպոս Սաթուհեանի և Յուսէփ վարդապետի, այցելութիւն տուեց Վրաստանի էկզարխ Նիկողայ արքեպիսկոպոսին: Հնդկանքութիւնը էկզարխի կողմից հղաւ շատ յարգանքով և մեծարանքով. էկզարքատան դահլիճում հուսաւրվել էին օրթոդոքս հոգեւորականութիւնը և Վրաստանի կանսիստորիայի անդամները: Էկզարխը նրանց ամենքին ներկայացրեց Վեհափառին: Տեսակցութիւնը տեւեց 20 րոպէ:

Գրանձակի յաջորդ Կորին վարդապետը օգոստոսի 8-ին այցելեց Թիֆլիսի պարսից ընդհանուր հիւպատոսին, որը սիրալիք ընդունելութիւն անելով, ծանօթացրեց հայր սուրբին Գրանձակի պարսից հիւպատոսի հետ, պատուրելով պահանջել յաջորդի և հայ ժողովրդի հետ բարեկամական սերտ յարաբերութիւններ:

Ժողովրդական լուսաւորութեան միջնորդութեան մէջ կազմված համալսարանական կանոնադրութիւնը վերաբնիկ յատուկ յանձնաժողովն օգոստոսի երկրորդ կէտում, ասում է «Քրօն»-ը, կը վերջանէ գործը: Նա արդէն որոշել է իր վերաբերութիւնը դէպի ընկալութիւնները ու պրօֆեսսորներին նշանակման գործը. նա ընդունել է այն սկզբունքը, որ այդ երեք պաշտօններում էլ մարդիկ նշանակվելու են ընտրութիւնով: Դեռ ընտրութեան կարգն ու մանրամասնութիւնները չեն մշակված: Այդ համալսարանական նոր օրէնսդրութիւնը մատուցելու կայ այս աշնանը ներկայացնել Պետական Դումայի ընտրութեան, եթէ Դուման բացվի մինչ այդ, եթէ ոչ նա կը յանձնվի Պետական խորհրդի ընտրութեանը:

Բազուի աղետի դոհերի օգտին ստացանք Նոր-Բուխարայից, Ն. Ոսկանեանի միջոցով, հրէայ սիրողները առած ներկայացման մի մասը 28 րոպէ:

Մարտաբաղբի լրագիրները հաղորդում են, որ Օբաֆորդի համալսարանի պրօֆեսոր յայտնի ուսուցչական Մակաիմ Կովալսկին հրաւերված է Պետերբուրգի պոլիտեխնիկում մի կողմից՝ մայրաքաղաքում առաջինայ ուսումնական տարում մի քանի դասախօսութիւններ կարդալու Արեւմտեան Եւրոպայի սահմանադրական պետութիւններին մասին: Կովալսկին, ասում են, համաձայնութիւն է առել: Բայց «Сынъ-Отъ» լրագիրը հաղորդում է այժմ, որ այդ դասախօսութիւնները տեղի չեն ունենալու հեղինակից անկախ պատճառներով:

Ֆինանսների միջնորդութիւնը, ասում է «Рассветъ» լրագիրը, սկսել է իրենց կամ արդիւնների կեղծման դէմ նոր օրէնքի մշակութիւնը: Մինչև այժմ կային առանձին-առանձին աւարական եկեղեցական դէմ օրէնքներ և այդ օրէնքները վերաբերում էին նոյնօրինակ օրէնսդրութեան ձևով, աչքի առնելով, որ բոլոր կենսական իրերի կեղծման գործը պէտք է պարունակէ բաւական խիստ պատիժներ: Ծախվող աւարական համար պատասխանատուութիւնը դրվում է ոչ միայն ծախողի, այլ և գործարանատիրոջ վրա:

Կովկասեան ձկնարանների կառավարիչ խաւական պետական խորհրդական Մարշալը, ասում է «С. Օ.» լրագիրը, հրաժարական է տուել: Դրա պատճառն այն է, որ անցեալ տաւրի յատուկ վերաբնիկութիւն էր նշանակված իշխան ձկնարանների գործերի համար և այդ

Թուում են. Պետերբուրգը, Մոսկվան, Աստրա-
խանը, Բազուն, Վարաշան, Վերնան, Վորո-
նոսի, Նիկոլայևսկի, Իրկուտսկի, Կադան, Կի-
շինի, Կոստրոմա, Լոգո, Նիժնի-Նովոգորոդ,
Օդեսան, Օբսոլ, Րիգան, Րոստով, Նախի-
Չևանի հետ, Սամարան, Սարատովը, Տաշկեն-
տը, Թիֆլիսը, Տուլան, Նարկովը և Նարտուկ-
Նանանդերում և շրջաններում ընտրություն-
ները կատարվում են ընտրողական ժողովնե-
րում՝ ազնուականության պարագլխի կամ
նրան փոխարինող անձի նախագահությամբ.
այդ ժողովները բաղկանում են գաւառական
հողատերերի քաղաքների ընտրողների, գեղե-
րի լիազորների ընտրողական համաժողովնե-
րի ընտրված անձները: Մայրաքաղաքներին
համար ընտրողների թիվը 160 է, իսկ միւս
քաղաքներին համար 80 հոգի: Ընտրություն-
ներին չեն կարող մասնակցել 25 տարեկանից
փոքր անձները, սովորողները, զորքի և նաւա-
տորմի մէջ ծառայողները, որոնք իսկական
ծառայություն մէջ են, թափառական այլացե-
ղներ և օտարազգայինները: Զին կարող
մասնակցել նաև դատով խայտառակվածները:
և պատժվածները, սնանկները, հոգևոր կոչու-
մից արտաքսվածները, հասարակութենից և
ազնուականութենից վնասվածները, նահան-
գապետները, փոխ-նահանգապետները քաղա-
քապետներ և նրանց օգնականները, նոյն-
պէս և ոստիկանական պաշտօնականները:
Կանայք կարող են, եթէ համապատաս-
խան ցէնը ունենան, լիազորությունները
տալ իրանց ամուսնիններին կամ որդինե-
րին: Որոշ օրէնքներով ճշտութեամբ հաս-
տատված է այդ ցէնքի չափը: Ընտրողների
ժողովները հրաւիրվում են նահանգական կամ
գաւառական քաղաքներում: Պետական Դու-
մայի համար երկուսն ձեն այս է. «Մենք, ի
ներքոյ յիշվածներս, խօսք ենք տալիս կատա-
րել մեր վրա դրված պետական Դումայի ան-
դամութեան պաշտօն մեր հասկացողութեան և
ոյժի ծայրայիտ չափով, պահպանելով հաւա-
տարմութիւն Նորին Կայսերական Մեծութիւն
Թագաւոր Կայսրին և համարի Ռուսաստանի
Ինքնակալին և մտածելով միայն Ռուսաստա-
նի բարօրութեան և օգուի մասին: Ի հաստա-
տութիւն ստորագրում ենք սեփական ձեռ-
քով»:

6 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Օգոստոսի 6-ին Սենատում
սենատոր Մամոնտովի նախագահութեամբ կա-
յացաւ սենատորների ժողովը: Նախագահող
Մամոնտովը կարգաց Բարձրագոյն մանի-
ֆեստը:

ՍԵՐԿՈՎ, 5 օգոստոսի: Նահանգապետը
թոյլ չը տուէր նահանգական դեմսովային ար-
տակարգ ժողովի գումարումը:

ՏՕԿԻՐ, 5 օգոստոսի: Շատ կարճ ժամանա-
կից յետոյ կը գումարվի պարլամենտի ար-
տակարգ նիստը: Սաղաղութեան համար յոյսը
ամուր է: Տօկիոյում տերող կարծիքի համա-
ձայն խաղաղութիւնը ապահոված է համար-
վում: Բօրայում գնները բարձրանում են:

ՆԻԻ-ՉՈՒԱՆ, 5 օգոստոսի: Նապոլեոն
զօրքը ցամաքային ճանապարհներով և զետե-
րով անգլիան քանակութեամբ պաշար է փո-
խադրում: Բանակի ճակատից ստացված տե-
ղեկութիւնների համաձայն պատվում է գլխա-
ւոր ճակատամարտ առաջիկայ երկու շաբաթ-
ները ընթացքում: Անձրևը սակաւ է գալիս:

ՊՐՏՄՈՒՏ, 5 օգոստոսի: Այստեղ բա-
ցատրվում է այն փառքը, որ հապոնական
ֆինանսական գործակալ Կանէկուն այսօր մի
քանի անգամ եղել է Ռուզվելտի մօտ: Ենթա-
դրում են, որ Ռուզվելտը այս օրերս կը հրա-
տարակի մի գեղեցում, որ վերաբերում է
բանակցութիւնների դրութեանը և խաղաղու-
թիւն կնքելու շանսները: Այստեղ լարված
հետաքրքրութեամբ հետևում են Անգլիայի և
Գերմանիայի վերաբերմունքին դէպի խաղա-
ղաբար բանակցութիւնների հարցը: Ասում են,
որ պրոսական պրինց չայնթերը կայցելի
Միտան-Նահանգներում աշխարհ:

ՊՐՏՄՈՒՏ, 5 օգոստոսի: Կոնֆերենցիայի
նիստերը յետաձգված են մինչև օգոստոսի
9-ը, այդ օրը պատվում են վերջնական միժա-
բանութիւններ:

ԼՈՆԴՈՆ, 5 օգոստոսի: «Թայմս» ասելով,
Վիտտէն ասել է հապոնացիներին իբր թէ
հետեւեալը. «Մենք ձեզ կը վճարենք այն բո-
լորը ինչ որ դուք ծախել եք միջ լաւութիւն
անելով: Գերիները պահպանութեան և ուրիշ
նման ծախսերը դուք փոխարինաբար կը ստա-
նաք առանց տատանման, իսկ այն բոլոր
ծախսերը ինչ որ դուք արել եք մեզ քնաւե-
լու համար, մի կօպէկ էլ չէք ստանալ»:
«Դէյլի-Տելեգրաֆ»-ի թղթակիցը ասում է, որ

Վիտտէն առաջարկել է տալ պաշտօնական
հաւատարմութիւն, որ Ռուսաստանը մտադրու-
թիւն չունի ներկայումս մեծացնելու իր նա-
ւատորմը արեւելեան ջրերում, բայց չը ցան-
կանալով ուրիշ զինուորներ՝ ծովային ոյժերը
սահմանափակելու հարցի մասին: Ետպօնացի-
ները չընդունեցին նրա առաջարկութիւնը:
Վիտտէն ընդունեց մի պայման, որի զօրու-
թեամբ երկաթուղին Նարբիից դէպի հիւսիս
և դէպի հարաւ չը պէտք է ծառայի պատե-
րազմական նպատակների համար: Անգլիական
թղթերին մեծամասնութիւնը բացի «Դէյլի-
Նիւս»-ից հաւանում են հապոնական պայման-
ները, չը թագնեւելով սակայն իրանց երկուղը
Վիտտէնի զօրեղ ազդեցութեան առթիւ, որը
կարող է ամերիկական հասարակական կար-
ծիքը շուտ առաջ Ռուսաստանի կողմը՝ հապո-
նական պահանջներին հակառակ:

ՊՐՏՄՈՒՏ, 5 օգոստոսի: Ամբողջ առա-
ւօտեան ընթացքում ընկնում էր Սաղաղ Ու-
կրանսում ծովային ոյժերի սահմանափակ-
ման հարցին վերաբերող տառն և մէկերորդ
յօդուածը: Կատարի վիճաբանութիւններ ծա-
գնեցին: Կէսօրից յետոյ կրկնվեցին այդ հա-
րցի վերաբերմամբ խորհրդակցութիւններ: Հի-
տեւալ նիստը կը կայանայ երկուշաբթի օր-
վանից ոչ վաղ, որպէս զի լիազորները ժամա-
նակ ունենան իրանց կառավարութիւններին
զեկուցելու: Ուղարկվում, այնպէս որ խաղա-
ղութեան և պատերազմի որոշումը կարելի է
ծարից և միկաղօցի: Տամբերկուերորդ յօ-
դուածը, որ վերաբերում է ձկնորսական ար-
տօնութիւններին սիբիրական ափերի մօտ,
կընդունվի: Գայթակցութեան քաղ է մնում
պատերազմական վարձատրութեան, ծովային
ոյժերի սահմանափակման, չէղքը նաւահան-
քանութեամբ գտնվող նաւերի և Սախալինի
վերաբերող հարցերը: Սակայն հնարաւոր հա-
մաձայնութեան յոյսը տեսնում են հապոնա-
ցիներին այն պատրաստակամութեան մէջ, ո-
րով նրանք ցանկանում են միտան ընկել վի-
ճելի կէտերը: Առաւօտեան նիստում Կոմու-
նիստ յայտնեց, որ պատերազմական ծախսերը
որոշվում են տաւալ միլիոն ֆրանկ իւրաքան-
չիւր քան և չորս ժամի համար, հինգ հա-
րիւր օրվայ ընթացքում: Հաղորդում են, որ
կօրէական պատգամաւորները ժամանել են
Միտան-Նահանգները Ռուզվելտի խնդրի
ներկայացնելու, որպէս զի վերջինս իր ազ-
դեցութիւնը գործակալի Կօրէյի շահերը կօ-
ֆերենցիայում պաշտպանելու: Ռուզվելտը
հրաժարվեց այդ խնդրը ընդունելու, որի մէջ
ասված է, որ հապոնական կառավարութիւնը
բարեփոխութիւններ չէ մտցրել կօրէյացիների
վիճակի մէջ: Ետպօնացիները ոյժի շնորհիւ
ամեն տեսակ թանկագին արտօնութիւններ են
ստացել և դրա համար էլ կօրէյացիները եր-
կուղ են կրում, որ Ետպօնան Կօրէյի ան-
կախութեան համար տուած խոստումը չի պա-
հիլ:

ՏՕԿԻՐ, 5 օգոստոսի: Կառավարութիւնը
ծովային ոյժերի սահմանափակման պայմանը
շատ կարեւոր է համարում և գերակշռում է
աւելի շուտ պատերազմը շարունակել, քան
թէ այդ կէտի վերաբերմամբ որ և է բան դիշել:
«Սաղաղութեան Միութիւն» կոչվող քաղա-
քական մեծ խումբը Կոմուրային ուղարկել է
հետեւեալ հեռագիրը. «Մենք ցանկանում ենք
որ խաղաղութեան համար տեղի ունեցող բա-
նակցութիւնները չը պէտք է դադարեցնեն
պատերազմական գործողութիւնները, այլ
ընդհակառակը, դրանք պէտք է պաշտպանեն
խաղաղութիւնը: Յաւուում ենք, որ հապոնական
ժողովրդի մէջ ցատուկն առաջ եկաւ թոյլ տալ
(?) ուսման իրանց հաղաւ պահելու բա-
նակցութիւններին ժամանակ:

ՄՕՍԿՎԱ, 6 օգոստոսի: Պետական Դումայի
մանիֆեստը ապագայի վերաբերմամբ մեծ
յոյսերով ընդունվեցաւ այստեղ. քաղաքը զար-
դարել է զբօսայիններով: Վաղը հանդիսաւոր
մաղթանք կը կատարվի ժողովրդական ներկա-
յացուցչութեան վերաբերող Բարձրագոյն մա-
մանիֆեստի առթիւ:

ԼՈՆԴՈՆ, 6 օգոստոսի: Նիւ-Յօրկի լրագիր-
ներից երկուսը մանրամասն հաղորդում են
եւրօպական պետութիւններից մի քանիսի,
մանաւանդ Ֆրանսիայի և Անգլիայի փորձերը
նախադրուշացնելու բանակցութիւնների պա-
ռակաւումը: Ասում են, որ Վիտտէն այլ ևս
յոյս չունի խաղաղութեան վրա, ևս մտադրել
է Պրոստուտը թողնել օգոստոսի 9-ին: Միւս
կողմից Մատթ ասում է, որ ինքն անձամբ
գնեւ ևս յոյս ունի գործի աշող լուծման վրա:
«Աւստրալիան» Պրեսս-ը ասում է, որ պրօֆե-
սօր Մարտինը այն շոգնաւոր տախտակամա-
ծի վրա է տեղ ընկել, որը հետեւեալ շաբաթ

պէտք է հեռանայ Ամերիկայից:

ԼՈՆԴՈՆ, 6 օգոստոսի: Լօնդօնի լրագիրնե-
րի մեծամասնութիւնը արդէն բացատրու-
թիւններ է տալիս Պետական Դումայի հիմ-
նարկութեան վերաբերող Բարձրագոյն մա-
նիֆեստի մասին: «Դէյլի-Տելեգրաֆ»-ը ասում
է, որ Ռուսաստանի ժողովրդական ներկայա-
ցուցչութեան շնորհիւ, անկասկած, ամենքը
կը համարեն ուսուական պատմութեան մէջ
իրբ արդարագլխի սկիզբը, որ աւետում է
քաղաքացիական ազատութեան արշալոյսը:

ՊԱՐԻԶ, 6 օգոստոսի: Պետական Դումայի
մանիֆեստը և կանոնադրութիւնը բոլոր լրա-
գիրները լոյս են ընծայել առանց կոմպենսա-
ցիաների, բացի Կլէմանսօյի «Օրօր» օրգանից
որը պետական այդ գործողութիւնների համար
հաւանական կարծիք չէ յայտնում:

ՆՐՈՄ, 6 օգոստոսի: «Մեաւօր»-ն այ-
սօրվայ համարում, որտեղ տպագրված է Պե-
տական Դումայի մանիֆեստը, այսօր համա-
րում է իբրեւ մի նշանաւոր օր Ռուսաստանի
քաղաքակրթութեան պատմութեան հա-
մար: «Յիտաւիտ» սօցիալիստական օրգանը
ասում է, որ Ռուսաստանի սահմանադրու-
թիւնը աւտօկրատիական-բիւրօկրատիական
արդիւնք է: Միւս լրագիրները լուռութիւն են
պահպանում:

7 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Գնեւրալ Լինկոլնի հեռա-
գիրը 1905 թիւ օգոստոսի 6-ից. «Մեր զօր-
քերը, որոնք ուղարկվել են խոնարհներին
հալածելու Սոյունիէին շրջանում օգոստոսի
3-ին երկու ընդհարում ունեցան նրանց հետ:
Վերջին ընդհարման ժամանակ Իմպատոյի
խումբը բոլորովին ցրվեց: Սպանվածների մէջ
գտան նաև Իմպատոյի և 2 հապոնացիների
մարմինները: Պատերազմական ընդհարումների
մասին ուրիշ զեկուցումներ չը կան»:

ՆՐՈՄ, 6 օգոստոսի: Վատիկանի «Օրսեր-
վատօրէ Բօմանօ» օրգանը գովում է կայսրին
իմաստուն համաձայնութեան հասարակական
կարծիքին արված զիջման և մանիֆեստի լաւ
ոգու համար: «Բաւալիա» ժուրնալը Պետական
Դումայի կանոնադրութիւնը ազատամիտ է
համարում, որը զօրացնում է ժողովրդի իշ-
խանութիւնը:

ՆՐՈՄ, 7 օգոստոսի: «Բաւալիա Միլիտար»
ժուրնալը Տօկիօյի մի հեռագիր է ստացել,
որ իբր թէ միկաղօն թոյլ է տուել մարշալ
Օյեմային բանակցութիւններ մէջ մանկու
Լինկոլնի հետ՝ զինադադար կնքելու հարցի
առթիւ:

ՕԴԵՍՍԱ, 7 օգոստոսի: Մանիֆեստին վե-
րաբերող հեռագիրները միմեանց ձեռքից խը-
լում են: Լրագրական տպարանները հազիւ են
ժամանակ գտնում այդ հեռագիրները տպա-
գրելու: Մարդիկ խմբագրատները պաշարում
են, հեռագիրներ, պահանջելով: Մայր եկեղե-
ցում մաղթանքից յետոյ արեւելակողմուր կար-
գաց մանիֆեստը:

ՍԵՐԿՈՎ, 6 օգոստոսի: Գունչուկինից ստաց-
ված տեղեկութիւնների համաձայն, բանակի
ճակատի վրա վերջին օրերս փոփոխութիւններ
չը կան: Մի շաբաթվա ընդհատումից յետոյ
նորից սկսվեցին անձնակցերը:

ՄՕՍԿՎԱ, 7 օգոստոսի: Այսօր Ուսպէնսկի
տաճարում մանիֆեստի առթիւ միաբազմաբար
հանդիսաւոր մաղթանք կատարեց Թագաւոր
Կայսրի երկարակեցութեան համար: Մաղ-
թանքից առաջ աւազ սարկաւազը կարգաց
մանիֆեստը, որից յետոյ միաբազմաբար ա-
սաց հետեւեալ խօսքերը. «Ռուսաստանը այժմ
պատմական մի մեծ բօյէ է անցկացնում. ժո-
ղովրդի և Կայսրի մէջ գոյութիւն ունեցող
միջապատը ընկաւ և այժմ ժողովուրդը կարող
է իր կարիքները անմիջապէս յայտնելու Թա-
գաւորին: Այժմ բոլոր կուսակցութիւնների
մարդկանց հայեացքները ուղղված են ժողո-
վրդի ապագայ արժանաւոր ընտրեալների
վրա: Իր ճաւի վերջում միաբազմաբար ցան-
կութիւն արտայայտեց, որ այդ ընտրեալները
լուրջ և պարտաճանաչ կերպով կը վերաբեր-
վեն դէպի իրանց պարտականութիւնները, ո-
րոնք լաւ պատուներ կը տան»:

8 օգոստոսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Մօսկվայից հաղորդում են
«Ռուս»-ին, որ Պետական Դումայի կանոնա-
դրութեան հիման վրա, յանձնված է Մօսկվա-
յի քաղաքային ուղարկային կազմի այն ան-
ձանց ցուցակը, որոնք բաւականաչափ ցնեղ
ուներ Պետական Դումայի ընտրութիւններին
մասնակցելու: Այդ աշխատանքը ուղարկման
յանձնել է վիճակագրական բիւրօյին, որի
շտապը այդ նպատակով աւելցնում է 50
մարդով: Ձեռքի տակ ունեցած տեղեկութիւն-
ների համեմատ Մօսկվայում ընտրողական ի-

րաւունք վայելող անձանց թիւը համում է
12,000-ի:

ԼՈՆԴՈՆ, 8 օգոստոսի: Թագաւորը նշանա-
կեց Կանադայի նախկին ընդհանուր նահան-
գապետ Լորդ Միլնթոյին Հնդկաստանի փո-
խարքայ:

ՄՕՍԿՎԱ, 8 օգոստոսի: Վախճանվեց «Ռուս-
սկիա Վեդօմօստի» լրագրի հիմնադիր, Մօս-
կվայի գրականագէտների փոխադարձ օգնու-
թեան կասսայի նախագահ՝ Լուկին, որ գրում
էր «Համետ Դիտող» ծածկանաւան տակ: Գի-
շերվայ ժամը 1-ին այրվեց հնդկաբնակ այ-
գու թաւորօնը վարչութեան և դերասանների
ամբողջ գոյքի հետ:

ՊՐՏՄՈՒՏ, 7 օգոստոսի: Բօզնին տըր-
ված հարցին թէ ինչից առաջացաւ նրա այ-
ցելութիւնը Ռուզվելտին, բարօնը պատասխա-
նեց, թէ նախագահը ցանկանում էր նրա հետ
խօսել սլաւօնական գրականութեան մասին:
Պնդում են իբր թէ Ռուզվելտը յայտնեց, որ
ինքը չէ կարծում, թէ Ռուսաստանը կարող է
շարդել Ետպօնային: Նա խորհուրդ է տալիս
կնքել հաշտութիւն յանուն մարգարտութեան:
Նախագահը ասաց Բօզնին, որ Ետպօնան
կը ջնջէ Ռուսաստանի ծովային զօրութեան և
դիմաթափ արված նաւերի անձնատուր լինե-
լու հարցերում, սակայն կը պնդէ հատուցման
և Սախալինի դիջման վրա:

ՊԱՐԻԶ, օգոստոսի 8-ին: Վախճանվեց յայտ-
նի նկարիչ Բուրգօն:

ՊՐՏՄՈՒՏ, օգոստոսի 7-ին: Բարօն Ռօ-
զէնը մնաց Ռուզվելտի մօտ մի ժամից աւելի
և դուրս գնաց ժպտող դէմքով: Ներս մտնելու
ժամանակ նա լուրջ կերպարանք ունէր: Ռօ-
զէնը և Ռուզվելտը հրաժարվում են հաղորդե-
լու խօսակցութեան նիւթը: Նախագահը հա-
ւանօրէն ենթադրում է, որ լուրի հրապարակ
հանելը կարող է խանգարել տեսակցութեան
աշխուղութիւնը: Պորտսմութ վերադարձած Ռօ-
զէնը խորհրդակցեց Վիտտէի հետ: Սատուն ե-
րեկ ասաց, որ խաղաղութեան կնքելու հա-
մար 5 սանսեր կան մէկի հակառակ, բայց ա-
ւելացրեց, որ խաղաղութիւնը հնարաւոր է
միայն կօմպրօմիսի և փոխադարձ զիջումների
շնորհիւ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Լրագրական տեղեկութիւն-
ների համաձայն Պետական Դումայի խորհր-
դակցութեան առաջին հերթին կառավարկին
հետեւեալ հարցերը. ա) նոր քաղաքային դրու-
թիւնը. բ) գիւղացիական բէֆօրմը. գ) հրէա-
կան հարցը. դ) ընդհանուր պարտաւոր ուս-
ման ներմուծումը և ե) զեմսովային կանո-
նադրութեան փոփոխութիւնը և բացի դրա-
նից, ինչպէս արդէն յայտնի է, կը ներկայաց-
վին և այն յանձնաժողովի աշխատանքները,
որ Բարձրագոյն ուղարկելի հիման վրա վեր-
ջին ժամանակներս հրաւիրվել էր: Առաջին
ժողովը կը լինի մեծ հանդիսաւորութեամբ:
Ժողովրդական ներկայացուցչութեան աշխա-
տանքների բացումը կը լինի Օգոստոսի
Անձրի, Պետական խորհրդի անդամները,
մինիստրների գլխաւոր վարչութիւնների գլը-
խաւորների և նաև պետութիւնների այն ներ-
կայացուցիչների ներկայութեամբ, որոնք
գտնվում են ուսաց արքունիքում: Նիստից եր-
կու շաբաթ առաջ տեղի կունենայ Պետական
Դումայի խորհրդակցութիւն նախնական լիա-
զօրութեան և դրա ստուգման մասին:

ՍՕՄՐԻ, 5 օգոստոսի: Առաջին և երկրորդ
ուսաց մանրակական բանակները դասաւոր-
ված են առաջին գծի վրա, իսկ երկրորդ բա-
նակը պահեւտ է կազմում: Երկաթուղու մօտ
գտնվում է 40,000 ուսաց հեծկաժօրք: Եա-
պօնական հաղորդակցութեան գծի վրա յաճախ
յարձակվում են աւազակներ:

ՏՕԿԻՐ, 6 օգոստոսի: Չը նայած սաստիկ
անձրևներին հապոնացիները Կօրէյի հիւսի-
սում առաջ են շարժվում: Ռուսները մարքե-
ցին ամբողջութեամբ, յետ մղվելով դէպի հիւ-
սիս և անցան Տիւմէն գետը աւերելով կա-
մուրջները: Հաւատացնում են, որ Կօրէյական
բանակը միտնում է Օյամայի բանակի հետ:
ՄՕՄԻ, օգոստոսի 7-ին: Լինկոլնի վերջաց-
նում է ամրացման աշխատանքները: Նա ունի
400—500 հազար մարդ: Ռուսաստանից շատ
զօրք է գալիս, որի նշանաւոր մասը գնում է
դէպի Տիւմէն:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Կուրօկի բաճա-
կեց հաղորդում են, որ ռազմական լուրջ գոր-
ծողութիւնները դեռ 3 շաբաթվայ ընթացքում
անհատին են, որովհետև անձրևները եր-
կուրը դարձրել են մի անագին ճահիճ:
Կուրօկի բանակը, որ անձրևներից առաջ
պատրաստ էր առաջխաղացութեան համար,
սպաւում է, որ ճանապարհները չորանան և
այնուհետեւ արագ և ուժեղ հարուած կը հ

Электротпечатня типографского Т-ва „Гермесъ“. Мал. вл. № 15